

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112526591, 2112535943, 2112554595, 2112573439 և 2112579652 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 21 >> 05 2021թ. 7-13- 8316

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Աշխեն Սևոյանի ՄԴ/37179-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Թումանյան փողոցի 5-րդ շենքի 16-րդ բնակարանի բնակիչ Աշխեն Սևոյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112526591, 2112535943, 2112554595, 2112573439 և 2112579652 որոշումները՝ չնշելով որևէ պատճառ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ մայթ է համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով հետիոտնի տեղաշարժվելու համար նախատեսված երթևեկելի մասին հարող կամ դրանից որևէ եղանակով առանձնացված ճանապարհի տարրը:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ կանգառն արգելվում է մայթերին, բացառությամբ 61-րդ կետում նշված դեպքերի: Մայթերին թույլատրվում է կանգառն ու կայանումը միայն 6.4՝ կայանման տեղ և 8.6.2. - 8.6.9՝ տրանսպորտային միջոցների կանգնեցման ձևը կայանման տեղերում նշանների և 1.1՝ հոծ գիծ գծանշման առկայությամբ:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112526591, 2112535943, 2112554595, 2112573439 և 2112579652 որոշումների իրավախախտումների PIN անհատական ծածկագրերի տակ գետեղված տեսանյութերի դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը,

որ դիմումատուին պատկանող <<MITSUBISHI>> մակնիշի 35TU280 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը՝ 20.03.2021թ. ժամը 11:54:49-րդ վայրկյանից մինչև 11:56:09 վայրկյանը, 80 վայրկյան տևողությամբ, 22.03.2021թ. ժամը 11:57:56-րդ վայրկյանից մինչև 11:59:31 վայրկյանը, 95 վայրկյան տևողությամբ, 26.03.2021թ. ժամը 10:20:28-րդ վայրկյանից մինչև 10:21:46 վայրկյանը, 78 վայրկյան տևողությամբ, 30.03.2021թ. ժամը 09:33:15-րդ վայրկյանից մինչև 09:34:34 վայրկյանը, 79 վայրկյան տևողությամբ և 31.03.2021թ. ժամը 12:07:57-րդ վայրկյանից մինչև 12:09:28-րդ վայրկյանը, 91 վայրկյան տևողությամբ կանգառ է կատարել Երևան քաղաքի Ադոնց-Ազատություն-Ա.Ահարոնյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ մայթին, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, **չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը**, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, հետևաբար առկա չէ իրավական որևէ հիմք դիմումատուի արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար:

Այսպիսով, վարչական վարույթի ընթացքում հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին թիվ 2112526591, 2112535943, 2112554595, 2112573439 և 2112579652 որոշումներն իրավաչափ են և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112526591, 2112535943, 2112554595, 2112573439 և 2112579652 որոշումներն թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Աշխեն Սևոյանին:



Ե. Կարապետյան